Հովհաննես Հովհաննիսյան

Արծիվն ու արտույտը

Արծիվը կանգնած սև ժայռի գլխին
Հանգիստ ու հպարտ նայում է չորս դին.
Ցածն ամպեր ճերմակ յոդում են ձորում,
Վերևում վճիտ եթերն է ծորում:
Եվ ձյունագագաթ լեռների արքան
Չորս դին է նայում, ասում ինքն իրան.
«Ինձնից բարձր էլ ո՞վ կարող է սլանալ,
Այս վեհ բարձունքին ինձ պես տեր դառնալ»:

Հանկարծ երկնքի անհուն կապույտից
Անուշ ճռվողյուն հնչեց բերկրալից:
Արծիվն ահավոր նայեց դեպի վեր,
Տեսան՝ ուժը չէ աշխարհին միշտ տեր.
Արտույտը փոքրիկ մինչ երկինք հասած,
Արևի ոսկի փայլովն ողողված,
Գովքն էր գեղգեղում կենսաբեր գարնան,
Մահամերձ երկրի օրհներգն հարության:

1904